

Հաստատում եմ՝
ՀՖՖ առաջին փոխնախագահ,
գործադիր տնօրեն՝
_____ Ա.Մինասյան
« » _____ 2012թ.

Կանոնակարգ

2012թ. Երևանյան մանկական մրցաշարերի

Նպատակը և խնդիրները

1. Մինչև 10տ, մինչև 11տ. և մինչև 12տ. տարիքային խմբերի համար Երևան քաղաքում մրցաշարերի կազմակերպումը:
2. Մանկական ֆուտբոլի զարգացումը և մասսայականացումը:
3. Փոքր դաշտերի կիրառումը մանկական ֆուտբոլում:
4. Մրցաշարերի հաղթողների և մրցանակակիրների որոշումը:

Մրցաշարերի անցկացումը

1. Մրցաշարերը ղեկավարում է ՀՖՖ-ի Մանկապատանեկան կոմիտեն: Մրցումների անցկացումը իրականացվում է մրցաշարերի կազմակերպչական կոմիտեի կողմից՝ Փյունիկ, Բանանց և Ուլիս ակումբների հետ համատեղ:
2. Կազմակերպչական կոմիտեն գործում է հետևյալ կազմով՝

նախագահ՝ Է. Ղազարյան	- ՀՖՖ-ի մ/պատանեկան կոմիտեի նախագահ
անդամներ՝ Ս. Չախալյան	- Փյունիկ ակումբի մարզիչ
Ս. Գալստյան	- Բանանց ակումբի գլխավոր մարզիչ
Խ. Բարդակչյան	- Ուլիս ակումբի մ/դ փոխտնօրեն
Բ. Ղալոյան	- ՀՖՖ մանկապատանեկան բաժանմունքի պետ
3. ՀՖՖ-ն իրականացնում է մասնակցության փաստաթղթերի ձևակերպումը, մշակում և հաստատում է խաղացանկերը, ապահովում է մրցավարությունը:
4. Մրցաշարերի անցկացման մասնակից ակումբները՝
 - ապահովում են խաղադաշտերի տրամադրումը խաղացանկի համաձայն, այդ թվում հանդերձարաններ և խաղը ացկացնելու համար մնացած բոլոր պարագաներ,

- ապահովում են խաղադաշտերի համապատասխան գծումները, կազմակերպում են խաղերը և իրականացնում են մրցաշարի օպերատիվ ղեկավարումը,
- ամփոփում են մրցաշարերի արդյունքները և ներկայացնում են կազմ կոմիտե,
- ապահովում են խաղերի բոլոր մասնակիցների անվտանգությունը,
- ապահովում են խաղերի բուժ սպասարկումը, առանց որի խաղը չի անցկացվում:

5 Մրցաշարերը անցկացնող ակումբի /մարզադպրոցի/ պարտականությունների կատարման համար պատասխանատու է կազմ կոմիտեում ընդգրկված համապատասխան ակումբի պաշտոնյան:

Մրցաշարերը

Մրցաշարերը անցկացվում են հետևյալ տարիքային խմբերում`

1. մինչև 12 տարեկան տարիքային խմբի մանկական մրցաշար /Մ-12/,
2. մինչև 11 տարեկան տարիքային խմբի մանկական մրցաշար /Մ-11/,
3. մինչև 10 տարեկան տարիքային խմբի մանկական մրցաշար /Մ-10/:

Մրցաշարերի անցկացման վայրը, ժամկետները և անվանումը

1. Մրցաշարերը անցկացվում են հետևյալ ժամկետներում և մարզադաշտերում.

մրցաշարը	անցկացման վայրը	անցկացնող ակումբը	ժամկետը
Մ-12	«Փյունիկ» ՖԱ մ/դաշտ	«Փյունիկ» ՖԱ	սեպտեմբեր-նոյեմբեր
Մ-11	«Ուլիս» ՖԱ մ/դաշտ	«Ուլիս» ՖԱ	սեպտեմբեր-նոյեմբեր
Մ-10	«Բանանց» ՖԱ մ/դաշտ	«Բանանց» ՖԱ	սեպտեմբեր-նոյեմբեր

- Մ-12 նվիրված Չամլետ Մխիթարյանի հիշատակին
- Մ-11 նվիրված Չայկ Անդրեասյանի հիշատակին
- Մ-10 նվիրված Ալեքսանդր Կավալենկոյի հիշատակին

Յայտերը

1. Թիմերը ներկայացնող կազմակերպությունները հաստատում են իրենց թիմի /թիմերի/ մասնակցությունը մրցաշարերին մինչև ս/թ սեպտեմբերի 4-ը: ՀՖՖ ներկայացնելով սահմանված կարգի «Հավաստագիր» /տես հավելված 1/, որտեղ պետք է նշեն թիմի /երի/ անվանումը և տարիքային խումբը:
2. Հայտերի ներկայացման ժամկետը ս/թ սեպտեմբերի 10-20-ը/տես հավելված 2/,
 - (Մ-12 հայտերի ընդունյալ օրեր՝ ս/թ սեպտեմբերի 10,11,12)
 - (Մ-11 հայտերի ընդունյալ օրեր՝ ս/թ սեպտեմբերի 13,14,17)
 - (Մ-10 հայտերի ընդունյալ օրեր՝ ս/թ սեպտեմբերի 18,19,20)
3. Վերահայտավորման ժամանակահատված է համարվում ս/թ հոկտեմբերի 15-20-ը:
4. Սահմանված ժամկետում վերահայտավորումը անվճար է, այլ ժամկետներում վերահայտավորելու համար սահմանվում է վճար յուրաքանչյուր ֆուտբոլիստի համար՝ 500դրամ:
5. Ակումբի /թիմի/ պաշտոնյաների վերահայտավորումը ժամկետային սահմանափակում չունի և անվճար է:
6. Եթե վերահայտավորվող ֆուտբոլիստը նույն խաղաշրջանում եղել է հայտավորված մեկ այլ թիմում, ապա վերադարձվում է նախորդ թիմում ստացած մասնակցի քարտը /թիմից թիմ վերահայտավորել թույլատրվում է մեկ անգամ/:
7. Ցանկացած պարագայում թիմի հայտավորված ֆուտբոլիստների կազմը չպետք է գերազանցի 25-ը, իսկ պաշտոնյաներինը՝ 5-ը:
8. Այն ակումբները, որոնք առաջնություններում կունենան միայն մեկ թիմ, պետք է հայտավորեն նվազագույնը երկու պաշտոնյա:


Մրցաշարերի մասնակիցները, անցկացման կարգը, հաղթողի որոշումը, խաղի կանոնների փոփոխությունները

1. Մրցաշարերին իրավունք ունեն մասնակցել հետևյալ տարիներին ծնված ֆուտբոլիստները՝
 - Մ-12 /2001-2002թթ.ծնվածները/;
 - Մ-11 /2002-2003թթ.ծնվածները/;
 - Մ-10 /2003-2004թթ. ծնվածները/:
2. Մրցաշարերը անցկացվում են մեկ շրջանով:
3. Մրցաշարային աղյուսակում թիմերի դասակարգումը՝
 - հաղթանակի համար 3 միավոր, ոչ-ոքիի համար 1 միավոր, պարտության դեպքում միավոր չի տրվում,

- երկու եւ ավելի թիւերի միավորների հավասարության դեպքում թիւերի դասակարգման ժամանակ առավելությունը տրվում է այն թիւին, որը.
 - հավակնորդ թիւերի միմյանց հետ խաղերում վաստակել է ավելի շատ միավոր,
 - բոլոր հանդիպումներում ունի խփած և բաց թողած գնդակների լավագույն տարբերություն,
 - վիճակահանությամբ:

4. Մրցաշարերը անց են կացվում փոքրացված մարզադաշտերում հետևյալ փոփոխված կանոններով՝

- խաղադաշտի չափերը՝ ըստ նկարի /45-60 երկարություն, 25-40 լայնություն/,



- դարպասի չափերը՝ 5մ x 2մ,
- տուգանային հրապարակը՝ 9մ,
- գնդակի չափսը - 4 համարի,
- 11 մետրանոց նշակետը փոխարինել 7 մետրանոց նշակետով,
- խաղացողների քանակը՝ 8 x 8 խաղացող,
- մրցավարությունը - 1 մրցավար,
- ժամանակը - /Մ-12 25 x 25 րոպե/, /Մ-11 և Մ-10 20 x 20 րոպե/ 10 րոպե ընդմիջում,
- տուգանային, ազատ և անկյունային հարվածների ժամանակ մրցակից թիմի ֆուտբոլիստները պետք է գտնվեն գնդակից նվազագույնը 5մ. հեռավորության վրա,
- «խաղից դուրս» վիճակը չի կիրառվում,
- դարպասապահին ետ փոխանցում թույլատրվում է,
- փոխարինումներ կատարել անսահմանափակ քանակով, ետ փոխարինում թույլատրվում է:

Պարզևատրումները

1. Մրցաշարերում 1-ին, 2-րդ և 3-րդ տեղ գրաված թիմը, ֆուտբոլիստները և մարզչական կազմը պարզևատրվում են ՀՖՖ-ի դիպլոմներով:

ՄԿԱ բաժնի Մանկապատանեկան բաժանմունք

ՀԱՎԱՍՏԱԳԻՐ

/հավելված 1/

_____ կազմակերպությունը /քաղաքապետարանը, գյուղապետարանը, մարզադպրոցը, հանրակրթական դպրոցը կամ այլ կազմակերպություններ/ լիովին ընդունելով ՀՖՖ-ի հիմնարար փաստաթղթերը, այդ թվում նաև 2012թ. Երևանյան մանկական մրցաշարերի անցկացման կանոնակարգը, **հաստատում է** կազմակերպության ներքոհիշյալ թիմի /երի/ մասնակցությունը 2012թ. Երևանյան մանկական մրցաշարերին:

N	թիմի անվանումը	տարիքային խումբը	պատասխանատու մարզիչ
1			
2			
3			
4			
5			
6			
7			
8			
9			
10			
11			
12			

Կազմակերպության ղեկավար՝

/ _____ /

Ազգանուն, անուն

Կ.Տ.

« » _____ 2012թ.



ՀԱՅՏԱՎՈՐՈՒՄ / ՎԵՐԱՀԱՅՏԱՎՈՐՈՒՄ

/ընդգծել/

2012թ. Երևանյան մանկական մրցաշարերի մինչև _____ տ. առաջնության մասնակիցների

/թիմը ներկայացնող կազմակերպություն/ _____

/թիմի անվանումը/ _____

/պատասխանատուի հեռախոսը/ _____

Ֆուտբոլիստներ*

h/h	ՀՖՖ-ում գրանցման համարը	Ազգանուն, Անուն	Ծննդյան օր, ամիս տարի	Ծանոթություն
1				
2				
3				
4				
5				
6				
7				
8				
9				
10				
11				
12				
13				
14				
15				
16				
17				
18				
19				
20				
21				
22				
23				
24				
25				

Ղեկավար կազմ

h/h	Անձնական քարտի համարը	Ազգանուն, Անուն	Պաշտոնը	Հեռախոսը
1				
2				
3				
4				
5				

Վերը նշված ֆուտբոլիստները անցել են համապատասխան բժշկական զննում և թույլատրվում են մրցումներին մասնակցելու:

Թիմը ներկայացնող կազմակերպության ղեկավար

/ _____ /

Ազգանուն, անուն

Կ.Տ.

“ _ ” _____ 2012թ.